

Արմատատը տեղեկատվություն է ներկայացնում 2019 թվականի հունվար-մարտի (այդ թվում՝ մարտի) երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՄԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2019 թվականի հունվար-մարտի արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները

	Չափի միավոր	2019թ. մարտ	2019թ. մարտը 2018թ. մարտի նկատմամբ, %	2019թ. մարտը փետրվարի նկատմամբ, %	2019թ. հունվար-մարտ	2019թ. հունվար-մարտը 2018թ. հունվար-մարտի նկատմամբ, %
Տնտեսական ակտիվության ցուցանիշը	%	x	106.2	114.8	x	106.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	մլն.դրամ	160 898.7	102.2	116.1	423 792.1	102.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը¹	մլն.դրամ	x	x	x	74 820.9	99.8
Շինարարության ծավալը	մլն.դրամ	22 612.1	100.5	161.1	47 728.2	110.8
Առևտրի շրջանառությունը	մլն.դրամ	239 662.6	105.3	106.7	651 712.7	110.1
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	մլն.դրամ	153 136.1	116.9	110.8	421 577.1	117.3
Սպառողական գների ինդեքսը	%	x	101.9	100.1	x	101.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	մլն.կՎտ.ժ	628.2	103.4	109.3	1 814.9	86.0
Միջին ամսական անվանական աշխատավարձը	դրամ	177 239	105.9	103.0	174 069	104.3
Արտաքին առևտրաշրջանառությունը	մլն.դոլար	616.9	99.6	108.4	1 628.8	95.0
	մլրդ.դրամ	300.8	x	x	793.7	x
<i>այդ թվում՝</i>						
արտահանում	մլն.դոլար	206.5	97.5	107.5	543.0	91.4
	մլրդ.դրամ	100.7	x	x	264.6	x
ներմուծում	մլն.դոլար	410.4	100.8	108.8	1 085.8	96.9
	մլրդ.դրամ	200.1	x	x	529.1	x

¹Այսուհետ սույն ցուցանիշը, համաձայն «2019 թվականի վիճակագրական ծրագրի» Հավելված 1-ի, 1. Իրական հատվածի, 1.2 Արտադրություն (ծառայություններ) ենթահատվածի, 1.2.2 Գյուղատնտեսություն և ձկնորսություն ոլորտի, տող 29-ի ծածկագիր 122029-ի, հրապարակվելու է միայն եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրանքի արտադրության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության համահարթեցման անհրաժեշտությամբ: Սույն մոտեցումը կիրառվում է միջազգային վիճակագրական պրակտիկայում: Այսպես, համաձայն Եվրամիության «Վիճակագրական պահանջների կոմպենդիում, 2018»-ի «3.1.2. Գյուղատնտեսության վիճակագրություն» ենթակետի, Եվրամիության անդամ երկրներում գյուղատնտեսության վիճակագրության հրապարակումները կրում են տարեկան պարբերականություն (հղում՝ <https://ec.europa.eu/eurostat/documents/3859598/9393837/KS-GQ-18-009-EN-N.pdf/a1d2ffe9-2ba9-4b57-8e6c-6c13575ef072>, 132-141 էջեր, հրապարակված 2018թ. հոկտեմբեր, ԵՄ, Լյուքսեմբուրգ):

Ստորև բերվում են գծանկարներ (ռադարներ), որոնք նկարագրում են ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները.

**Ապրանքների և ծառայությունների արտադրության փոփոխությունները
2019 և 2018 թթ. հունվար-մարտին**

(նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %)

